«ՕՀԱՆՅԱՆ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍԱՆԵՐԸ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

06.02.2019 19:00

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում այսօր՝ փետրվարի 6-ին հյուրընկալվել են «Օհանյան» կրթահամալիրի 9-12-րդ դասարանների թվով 25 սաներ:
Աշակերտներին ՓՊ աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանը ներկայացրել է հանրային պաշտպանների գործառույթները և դատական գործերում նրանց կողմից ներկայացուցչություն կամ պաշտպանություն իրականացնելու պայմանները:
Փաստաբանական դպրոցում ուսանողները ծանոթացել են ընդունելության պայմաններին, կրթական մեթոդներին: Դպրոցի տնօրենի տեղակալ Արտակ Գևորգյանը ապագա գործընկերներին ներկայացրել է ընդունելության կարգը նշելով, որ ընդունելության և որակավորման քննությունները այնպիսի մեխանիզմով են կառուցված, որ նվազեցված է մարդկային գործոնը:
Շարունակելով շրջայցը ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում Մանե Կարապետյանը աշակերտներին ներկայացրել է Փաստաբանների պալատի կառուցվածքը, խոսել է Պալատի կառավարման մոդելի ու մարմինների մասին, ինչպիսիք են փաստաբանների ընդհանուր ժողովը, փաստաբանների պալատի խորհուրդը, որը կազմված է 12 անդամից և նախագահից և որակավորման հանձնաժողովը, որը կազմված է 8 անդամից:
Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանն ընդունելով աշակերտներին և ներկայացնելով փաստաբանական գործունեության առանձնահատկությունները, պատասխանել է հարցերին, որոնք վերաբերվում էին փաստաբանի վարքագծին, փաստաբանի աշխատանքին ու արդար դատաքննության իրականացմանը:
Պալատի նախագահը ընդգծել է, որ տարվում է քաղաքականություն հասարակության շրջանում իրավագիտակցության բարձրացման, փաստաբանների պաշտպանվածության բարձրացման ուղղություններով:
Շնորհակալություն հայտնելով փաստաբանության նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերելու համար՝ Արա Զոհրաբյանը հույս է հայտնել, որ ներկաներից շատերին կտեսնի իր գործընկերոջ կարգավիճակում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })